Digitally signed by
YEGHIAZARYAN LUSINE 7212980307
Date: 01.07.2025 18:19:50

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 26-06-2025 թ. որոշմամբ
«ՍԻՎԻԼԻԹԱՍ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՍԻՎԻԼԻԹԱՍ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՀՅՈՒՍԻՍ.ՊՈՂ.1 30ԳՐԱՍ չկա
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00964
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2008-05-20
1.5 ՀՎՀՀ-ն		02589506
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)99890848
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		c.barseghyan@bdoarmenia.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Օսկանյան Վարդան		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Վարդան Օսկանյան		
Հրաչ Կասպար		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Աբրահամ Պողիկեան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	48	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Ընթացիկ ծախսերի համար	2,707,733
	Ընթացիկ ծախսերի համար	133,036,374
	ԼՂ-ից տեղահանվածների խնդիրների լուսաբանում և հասցեագրում	8,172,155
	Լուսաբանելով Հայաստանը մարզեր	35,686,882

	Ապատեղեկատվության դեմ հանրային դիմակայության բարձրացում	12,920,260
	ՍիվիլՆեթի ներքին կարողությունների հզորացում արտաքին մարտահրավերներին դիմակայելու համար	7,455,230
	Արցախի Սիվիլնեթին աջակցություն	61,975,480
	Ներգրավելով հայաստանյան հասարակությունը և կառավարությունը անվտանգ տարածաշրջանի համար օրակարգի ձևավորման մեջ	15,919,088
	ՍիվիլՆեթի փաստերի ստուգման բաժնի հզորացում. ապատեղեկատվության դեմ պայքար և հավաստի լուրերի տարածում Հայաստանում	5,019,564
	Հարավային Կովկասում և Մոլդովայում ապատեղեկատվության դեմ պայքար	1,974,050
	Մարզերում բնապահպանական սոցիալական անվտանգային խնդիրների լուսաբանում	2,592,008
	Վերլուծելով Հայաստանի հակակոռուպցիոն ռազմավարությունը	2,057,000
	Տեղահանված արցախցի հայերի հիմնախնդիրների համապարփակ լուսաբանումը և նրանց ինտեգրումի հայ հասարակության մեջ	7,924,149
	Պրոֆեսիոնալ մեդիան և քաղհասարակությունը միավորում են ուժերը հանուն երկխոսության	4,240,000
	Հայաստանի ժողովրդավարության խթանում որակյալ լրագրության միջոցով	62,804,501
	Ֆրանկոֆոնիայի շրջանակներում ֆրանսերեն կոնտենտի ստեղծման աջակցություն	1,003,209
	Հայաստանի ժողովրդավարության դիտարկում առաջընթացի վերահսկում և փոփոխությունների խթանում	5,884,249
	Լեռնային Ղարաբաղից տեղահանված Սիվիլնեթի թիմին բռնի տեղահանվածներին վերաբերող հարցերի լուսաբանման հնարավորության տրամադրում	6,601,800
	Փորձառուների կողմից վերապատրաստում և մենթորություն	1,243,229
	կրթության զարգացմանը և հայ հանրության տեղեկացված լինելու իրավունքի աջակցություն	2,301,928
	Բիզնես նպատակով մուտքեր	40,999,006
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		

9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
ԷՂ-ից տեղահանվածների խնդիրների լուսաբանում և հասցեագրում	11,647,141	
Լուսաբանելով Հայաստանը մարզեր	47,872,617	
Ապատեղեկատվության դեմ հանրային դիմակայության բարձրացում	11,453,608	
ՍիվիլՆեթի ներքին կարողությունների հզորացում՝ արտաքին մարտահրավերներին դիմակայելու համար	18,587,889	
Արցախի Սիվիլնեթին աջակցություն	69,891,390	
Ներգրավելով հայաստանյան հասարակությունը և կառավարությունը անվտանգ տարածաշրջանի համար օրակարգի ձևավորման մեջ	16,188,177	
ՍիվիլՆեթի փաստերի ստուգման բաժնի հզորացում. ապատեղեկատվության դեմ պայքար և հավաստի լուրերի տարածում Հայաստանում	5,019,564	
Հարավային Կովկասում և Մոլդովայում ապատեղեկատվության դեմ պայքար	1,974,050	
Մարզերում բնապահպանական, սոցիալական և անվտանգային խնդիրների լուսաբանում	2,592,008	
Վերլուծելով Հայաստանի հակակոռուպցիոն ռազմավարությունը	3,479,492	
Տեղահանված արցախցի հայերի հիմնախնդիրների համապարփակ լուսաբանումը և նրանց ինտեգրումի հայ հասարակության մեջ	7,503,866	
Պրոֆեսիոնալ մեդիան և քաղհասարակությունը միավորում են ուժերը՝ հանուն երկխոսության	4,240,000	
Հայաստանի ժողովրդավարության խթանում որակյալ լրագրության միջոցով	35,744,655	
Ֆրանկոֆոնիայի շրջանակներում ֆրանսերեն կոնտենտի ստեղծման աջակցություն	1,003,209	

Հայաստանի ժողովրդավարության դիտարկում առաջընթացի վերահսկում և փոփոխությունների խթանում	4,544,984
Լեռնային Ղարաբաղից տեղահանված CivilNet թիմին բռնի տեղահանվածներին վերաբերող հարցերի լուսաբանման հնարավորության տրամադրում	6,601,800
Փորձառուների կողմից վերապատրաստում և մենթորություն (Project Fact - checking incubator)	1,243,229
կրթության զարգացմանը և հայ հանրության տեղեկացված լինելու իրավունքի աջակցություն	2,301,928
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	485,624,326
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	251,889,607

Նշումներ՝

12 և 13 տողերի գումարների տարբերությունը ձեռնարկատիրական գործունեության համար կատարված ընթացիկ ծախսերն են:

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ___9___ էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«ՍԻՎԻԼԻԹԱՍ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն 3

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 6

Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 7

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 8

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 9

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 10

ՀՀ, Երևան 0014, Պ. Սևակ 8; Հեռ.՝ (374 11) 60 70 81; info@tmaudit.am, www. tmaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Սիվիլիթաս» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Սիվիլիթաս» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2024թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական հոսքերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Թաթուլ Մովսիսյան
Գլխավոր տնօրեն/ Առաջադրանքի ղեկավար

30 հունիսի, 2025թ.
ք.Երևան, Պ.Սևակի 8

'000 դրամ	Ծանոթ.	31/12/24	31/12/23
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	6	50,813	64,924
Ոչ նյութական ակտիվներ		1,490	1,791
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		***52,303***	***66,715***
Պաշարներ	7	41	33
Կանխավճարներ պաշարների և ծառայությունների համար	8	421	187
Առևտրական դեբիտորական պարտքեր	9	387	877
Այլ ընթացիկ հարկային ակտիվներ	18	-	42
Արժեթղթեր	10	6,125	-
Դրամական միջոցներ	11	86,262	18,729
Այլ ընթացիկ ակտիվներ	12	84,510	144,176
Ընթացիկ ակտիվներ		***177,746***	***164,044***
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		***230,049***	***230,759***
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Հիմնադիրների ներդրումներ	13	500	500
Կուտակված շահույթ	13	9,467	5,415
Ընդամենը սեփական կապիտալ		***9,967***	***5,915***
Ոչ ընթացիկ շնորհներ	14	46,179	66,715
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		***46,179***	***66,715***
Վարկեր	15	638	1,198
Փոխառություններ	16	105	28,346
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	17	24,053	31,445
Այլ ընթացիկ հարկային պարտավորություններ	18	8,221	163
Աշխատավարձի և այլ կարճ. հատուց-ի գծով պարտ-թյուններ	19	36,080	49,134
Ընթացիկ շնորհներ	20	104,707	47,636
Այլ պարտավորություն		99	207
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		***173,903***	***158,129***
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		***230,049***	***230,759***

Տնօրեն Ա.Պողիկեան

Գլխավոր հաշվապահ
«Բի-Դի-Օ Ընքաունթինգ, Թաքս ընդ Լիգըլ» ՓԲԸ-ի
Հարկային և հարակից ծառայությունների տնօրեն Ն. Նուրոյան

10-24 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

'000 դրամ

	Ծանոթ.	2024	2023
Հասույթ	21	48,887	18,938
Վաճառքի ինքնարժեք	21	(43,025)	(16,600)
Համախառն շահույթ		***5,862***	***2,338***
Դրամաշնորհներից եկամուտ	22	369,127	346,533
Շնորհների գծով ծրագրային ծախսեր	22	(286,545)	(296,589)
Շնորհներից արդյունք		***82,582***	***49,944***
Այլ եկամուտներ	23	428	9,273
Իրացման ծախսեր		(11,108)	(10,521)
Վարչական ծախսեր		(57,894)	(59,883)
Այլ ծախսեր	23	(12,612)	(3,800)
Գործառնական շահույթ (վնաս)		***7,258***	***(12,650)***
Ֆինանսական ծախսեր	24	(140)	(190)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)		(2,996)	17,009
Շահույթ մինչև հարկումը		**4,122**	**4,169**
Շահութահարկի գծով ծախս	25	(70)	-
Զուտ շահույթ		**4,052**	**4,169**

Տնօրեն Ա.Պողիկեան

Գլխավոր հաշվապահ
«Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս ընդ Լիգըլ» ՓԲԸ-ի
Հարկային և հարակից ծառայությունների տնօրեն Ն. Նուրոյան

10-24 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

'000 դրամ

	Ծանոթ.	*Հիմնադիրների ներդրումներ*	*Կուտակված շահույթ*	*Ընդամենը*
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**13**	**500**	**1,246**	**1,746**
Զուտ շահույթ		-	4,169	4,169
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.		**500**	**5,415**	**5,915**
Զուտ շահույթ		-	4,052	4,052
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.		**500**	**9,467**	**9,967**

Տնօրեն Ա.Պողիկեան

Գլխավոր հաշվապահ
«Բի-Դի-Օ Ըքաունթինգ, Թաքս ընդ Լիգըլ» ՓԲԸ-ի
Հարկային և հարակից ծառայությունների տնօրեն Ն. Նուրոյան

10-24 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

'000 դրամ

	2024	2023
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
դրամաշնորհներից	440,780	396,428
վաճառքներից	40,999	18,982
այլ մուտքեր	-	12
նյութերի, ապրանքների, ծառայությունների ձեռք բերումից	(74,542)	(67,030)
աշխատակիցներին և նրանց անունից կատարված վճարումից	(279,522)	(296,098)
շահութահարկի վճարումից	-	(1,591)
այլ հարկեր, պարտադիր վճարների վճարումից	(7,475)	(2,283)
ծրագրային և այլ	(37,258)	(34,826)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	***82,982***	***13,593***
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից	(8,923)	(7,080)
Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր	***(8,923)***	***(7,080)***
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
վարկերի, փոխառությունների ստացումից	6,064	17,431
վարկերի, փոխառությունների մարումից	(16,965)	(23,430)
տոկոսների վճարումից	(140)	(184)
Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	***(11,041)***	***(6,183)***
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**63,018**	**329**
արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	4,515	15,680
Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվարի	**18,729**	**2,719**
Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբերի	**86,262**	**18,729**

Տնօրեն Ա.Պողիկեան

Գլխավոր հաշվապահ
«Բի-Դի-Օ Ընդունթինգ, Թաքս ընդ Լիգըլ» ՓԲԸ-ի
Հարկային և հարակից ծառայությունների տնօրեն Ն. Նուրոյան

10-24 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 01.07.2025 18:18